

## ՀՀ Ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 52/8

4 դեկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Լաերտ Բաղումյանի 06.11.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 26.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 302760/02 որոշման դեմ:

#### **Ա/Ձ Լաերտ Բաղումյանի գանգատում բերված փաստարկները.**

Վարչական մարմինը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի դրույթները: Այսպես, ՀՀ ՎԻՎ Օրենսգրքի 247-րդ հոդվածի համաձայն. «Վարչական իրավախախտման գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսված վարույթը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում (... ) 1) Վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայություն»:

ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 170.3 հոդվածի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 12-րդ հոդվածների բովանդակությունից երևում է, որ ՎԻՎՕ 170.3 հոդվածով սահմանված պատասխանատվությունը կարող է առաջանալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը ժամանակին չվճարելու համար:

Անդրադառնալով Որոշման մեջ արտացոլված եկամտային հարկի գծով օրենքով սահմանված ժամկետում չվճարված 16.996 դրամին, հարկ է նշել, որ դեռևս 23.10.2015 թ-ին ներկայացվել է եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկ (ճշգրտված հաշվարկ) 2015 թ-ի հունիս ամսվա հաշվետու ժամանակաշրջանի վերաբերյալ, որն ընդունվել է հարկային մարմնի կողմից: Ներկայացված հաշվետվության արդյունքում փոփոխվել է վճարվելիք հարկերի գումարի չափը և ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ կողմից 27.10.2015 թ-ին տրվել է թիվ 3399 տեղեկանքը այն մասին, որ 27.10.2015 թ-ի դրությամբ Ա/Ձ Լաերտ Բաղումյանը եկամտային հարկի գծով ունի 9549 դրամի գերավճար:

Ինչ վերաբերվում է Որոշման մեջ արտացոլված ոչ հարկային եկամուտ ՀԴՄ-ի գծով պարտավորություն համարվող 105.000 դրամին, ապա դրա վճարումը ժամանակին չկատարելը չի կարող պատասխանատվության հիմք հանդիսանալ, քանի որ այդ գումարը իրենից հարկ չի կարող ներկայացնել, և դրա վճարումը կատարվել է 22.10.2015 թ-ին՝ մինչև Որոշման կայացնելը:

Այսինքն, վարչական մարմինը 26.10.2015 թ-ին վարչական տույժ նշանակելու մասին որոշում է կայացնում 121.996 դրամ հարկային պարտավորություններ չկատարելու համար, իսկ 27.10.2015 թ-ին տրամադրվում է տեղեկանք՝ եկամտային հարկի գծով գերավճար առկա լինելու մասին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով Ա/Ձ Լաերտ Բաղումյանը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 26.10.2015 թ-ի թիվ 302760/02 որոշումը:

**«Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը».**

«ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 26.10.2015թ-ի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ Ա/Ձ Լաերտ Բաղումյանը 14.10.2015 թ-ի դրությամբ ունեցել է 121.996 դրամի հարկային պարտավորություն, որն օրենքով սահմանված ժամկետում չի վճարել: Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.3-րդ հոդվածով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 26.10.2015 թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 302760/02 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Լաերտ Բաղումյանի նկատմամբ վարչական տույժ նշանակելու, այն է՝ 20.000 դրամի չափով տուգանք կիրառելու մասին:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Լաերտ Բաղումյանի նկատմամբ վարչական տույժ նշանակելու համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ 14.10.2015 թ-ի դրությամբ նա ունեցել է 121.996 դրամի պարտավորություն:

Հարկ է նշել, որ 121.996 դրամի պարտավորությունը բաղկացած է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման արդյունքում կազմված ակտով արձանագրված 105.000 դրամի չափով տուգանքից, ինչպես նաև եկամտային հարկի գծով 16.996 դրամի պարտավորությունից:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.3-րդ հոդվածի համաձայն. «Հարկերը սահմանված ժամկետներում չվճարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով»:

Վերոգրյալ իրավանորմի դրույթներից հետևում է, որ անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է հարկերը սահմանված ժամկետներում վճարված չլինելու պայմանի առկայությունը:

Քննարկվող դեպքում Որոշման մեջ նշված է, որ Ա/Ձ Լաերտ Բաղումյանը 14.10.2015 թ-ի դրությամբ ունեցել է 121.996 դրամի հարկային պարտավորություն, ինչը, սակայն, չի համապատասխանում իրականությանը, քանի որ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված տուգանքը, այն է՝ 105.000 դրամը, չի համարվում հարկային պարտավորություն: Ընդ որում, նշված 105.000 դրամի տուգանքը Ա/Ձ Լաերտ Բաղումյանի կողմից վճարվել է 22.10.2015 թ-ին, այսինքն՝ Որոշումը կայացվելու դրությամբ նշված պարտավորությունն արդեն իսկ կատարված է եղել:

Ինչ վերաբերվում է եկամտային հարկի գծով 16.996 դրամի պարտավորությանը, ապա այս կապակցությամբ հարկ է նշել, որ Ա/Ձ Լաերտ Բաղումյանի կողմից 23.10.2015 թ-ին ներկայացվել է եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ճշգրտված ամփոփ հաշվարկ, որով ճշգրտել է 2015 թ-ի հունիս ամսվա համար ներկայացված հաշվարկում արտացոլված տվյալները: Ճշգրտված ամփոփ հաշվարկի ներկայացումից հետո ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ կողմից կատարվել է եկամտային հարկի



գծով պարտավորությունների վերահաշվարկ, որի արդյունքում 16.996 դրամի պարտավորությունը վերացել է:

Վերոգրյալ փաստական հանգամանքներից հետևում է, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 26.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 302760/02 որոշումը կայացվելու դրությամբ Ա/Ձ Լաերտ Բաղումյանը չկատարված հարկային պարտավորություններ չի ունեցել, հետևապես նաև բացակայել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.3-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության կիրառման հիմքը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 26.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 302760/02 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝

  
  
**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**